նեալ հրաբուն զաւրացքն տաւնելով ըզյիշատակ առաքելոյն Թադէոսի. վասն որո մաղթանաւք սորա կեցոյ ըզմեզ մարդասէր փրկիչ։

Այսաւր յընտրեալ աշակերտացն և ի խըմբից վարդապետաց սուրբ զառաքեալըն Թադէոս առաքեցեր ի Հայաստան լուսաւորիչ որդոց Թորգոմայ. վս. որ։

Այսաւր ծընեալ որդիք լուսոյ մաքուր երկամբք աւազանին ի ձեռըն սուրբ հաւատապետին մեծ և ընտրեալ առաքելոյն լուսապայծառ քարոզութեան. վս։

Այսաւր կոչեաց զազգըս հայոց նախահրաւէր կոչմամբ հոգւոյն ի հարսնութիւն սուրբ փեսային մուծանելով ի յառագաստ ընդ բազմելոցն անդրանկաց հոգոց. վս։

Այսաւր խնդայ մայր աստուծոյ տաճար բանին մարմնացելոյ յիշատակաւ հաւրըն լուսոյ և աղաչեայ զլոյսն ի հաւրէ որ վառեցաւ մարմնով ի քոյդ յարգանդի։ զի փըրկեսցէ զանձինըս մեր ի փորձութենէ։

Այսաւր ժողովք նահապետացն և երջանիկ դասք արդարոցն համախըմբեալ սիրով ընդ մեզ հըրճուիմք տաւնիւս վկայութեան առաքելոյն Թադէոսի. վս։

Այսաւր վկայն հանդիսաւոր վառեալ զինու տիգաւ խաչին եմուտ յատեան խրախուսելով և սատակեաց զչար ախոյեանն որպէս և դու կենսարեր փայտիւն. վս։

Այսաւր զգեղարդըն պատուական ետ մեզ նըշան պահպանութեան ներկեալ արեամբ կենարարին որով փրկիմք և ամրանամք յորոգայթից կրկին որսողաց. վս։

Այսաւր ծածկեալ գանձըն լուսոյ մաքուր նըշխարք երանելոյն վերացաւղէ ըզցաւղ շնորհաց ի մաքրութիւն հոգոց մերոց և ի բուժումն ախտաւից մարմնոց. վս։

Այսաւր և դու կոյս մարիամ աբրահամեան տոհմին պարծանք ի փրկութեան մերոյ խորհուրդ առցես ընդ քեզ միջնորդ կենաց սուրբ զառաքեալըն Թադէոս և հայցեսցես ի տեառնէ ըզթողութիւն մերոց յանցանաց։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ։

Նոյեմբերի 30-ին գումարուած Վատիկանի գաղտնի կոնսիստորիայում պապը սարկաւագ կարգի* կարդինալութեան աստիճան տուաւ Դոմինիկեան կրօնաւոր Ռափայէլ Պիերոտտիին և Յովսէփ Պրիսկո եպիսկոպոսին։ Մի քանի ուրիշ կարդինալներ ևս իրենց կարգերը փոխեցին։ իսկ Միւնխենի համար նուիրակ նշանակուած Լորենցելլի եպիսկոպոսը արքեպիսկոպոսութեան տիտղոս ստացաւ։ Բոլորեքեան սոքա Իտալիացիք են։—Բացի Լօրենցելլիից նուիրակներ նշանակուած են՝ Մադրիտի համար Նավա։ Լիսաբոնի համար Այուտի և Պարիզի համար Կլարի։

— Դ'Իւլստի տեղ Փարիզի Կաթոլիկական ճեմարանի տեսուչ ընտրուեցաւ Բայոնի արքեպիսկոպոսութեան փոխանորդ Պեշընար։ Պապը շտապեց իւր հաւանութիւնը տալ։ և նա դեկտեմբեր 14-ին հանդիսաւոր կերպով հաստատուեցաւ իւր նոր պաշտօնի մէջ։

— Ֆրանսիական խորհրդարանը կրկին 18,500 ֆրանկ պակասեցրել է այն գումարից։ որ նշանակած է իբրև նպաստ ծերութեան կամ խեղութեան պատճառով պաշտօնից ելած հոգևորականների համար։ Annales catholiques թերթն իրաւամբ ցաւութիւն է անուանում այդ արարմունքն՝ այն տեսակէտից։ որ ազատամիտ խորհրդականները չկարողանալով իրենց թշնամութիւնը։ դէպի կրօնն ու եկեղեցին առհասարակ։ մեծ հասոյթների և զօրեղ քաղաքական դիրքի տէր եկեղեցականների դէմ արտայայտել։ խեղճերից ու անօգնականներից են վրէժ հանում։

— Նէապոլսում վախճանուեցաւ այնտեղի կարդինալ արքեպիսկոպոս Ակուամիլլան։ որի հետ Վիլհելմ Բ. կայսրը իւր ճանապարհորդութեան միջոցին այնպիսի խորհրդաւոր տեսակցութիւն էր ունեցել և մտերմական յարաբերութեան մէջ մտել։ Հանգուցեալ կարդինալը մի ժամանակ պապացու էր համարուում։ բայց նորա դէպի գերմանացիք ցոյց տուած հակումը կասկածելի դարձրեց նորան ներկայ պապի շրջապատողների աչքում։ որոնց բոլորի համակրութիւնը Ֆրանսիայի կողմն է։—Յամենայն դէպս երրեակ դաշնակցութիւնը կորցրած է համարում այսպիսով մի կարևոր բարեկամ մօտակայ կոնկլավի անդամներից։

—Ինքը պապը իւր առանձին համակրութիւնը և սէրը դէպի Ֆրանսիան ցոյց տուաւ կրկին վերջերս։

* Ինչպէս յայտնի է։ կարդինալները երեք կարգի են բաժանուում՝ սարկաւագ, երէց եւ եպիսկոպոս։ որոնց մէջ սակայն իրաւունքների մի առանձին տարբերութիւն չկայ։

Քլոդվիկի մկրտութեան ԺԴ. դարագարձը տօնելու առթիւ նուիրած մի լատիներէն ուղերձով, ուր ի միջի այլոց ասած է. «Փրանսիական անունն օր աւուր զօրանում հասնում է մինչև հեռաւոր երկիրներ, Թող նա լինի զօրավիգ նաև արևելքի ժողովուրդներին և օգնէ տարածելու մեր սուրբ հաւատը»։

— Քաղաքական շրջաններում մասնաւոր ուշադրութեան և զանազան բացատրութիւնների առարկայ եղաւ այն ճառը, որ պապն արտասանեց հին պապական զօրքի սպաներին արած ընդունելութեան միջոցին, որով իւր ուրախութիւնն էր յայտնում նոցա հաւատարմական զգացումների համար և յոյս, թէ նոքա կշտապեն շուտով շրջապատել ու պաշտպանել իրեն, երբ հարկը պահանջէ։

—Երբ Նորերս Հռոմում յանկարծ վախճանուած կարդինալ Հօհենլոհէի համար ս. Մարիա Մաջջիօրէ յայտնի եկեղեցում հոգեհանգիստ էր կատարուում, Իտալիոյ թագուհին ևս ուղարկեց մի պսակ. բայց եկեղեցու դրան առաջ պապի հրամանով մերժուեցաւ այդ պսակը և մնաց դուրսը։ Հաղորդում են, որ այս մերժման պատճառով Գերմանիայի կայսեր և Անգլիոյ թագուհու պսակներն ևս դուրս են մնացել, երբ նոցա դեսպանները իմացել են պապի կարգադրութիւնը։

ՕՐԹՈՂՈՔՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ.

Ցոյն—Օրթոդոքս այն ընկերութիւնը, որի նպատակն է աւետարանը Ռուսաստանում տարածել, 1896 ամի 17 հոկտ. իւր տարեկան ժողովն ունեցաւ Պետերբուրգի ծովային թանգարանում, իւր նախագահ ուսուցչապետ Աստաֆիեվի ղեկավարութեամբ, ուր վերջինս հաղորդեց, որ ընկերութիւնն այժմ 20 շրջիկ գրավաճառ (kolporteur) ունի, որոնց Պետերբուրգից և Մոսկուայից աստուածաշունչներ են տրուում։ Աստուածաշնչի պահեստի ղեկավար Կ. Գոլուբովի անխոնջ գործունէութեան շնորհիւ, որ երբեմն շրջիկ գրավաճառ էր և ամենագժուար պարագաներին չնայած տասը տարի Սիբիրյում և Ամուր գետի շրջանում աշխատել է, ընկերութեան գործունէութիւնը վերջին տարին նշանաւոր զարկ ստացաւ Կիևում, Խարկովում, Խրիմում և Սիբիրիայում։ Նիժնի—Նովգորոդի ցուցահանդիսում սուրբ Գիրքը տարածող ընկերութիւնն ևս իւր ներկայացուցիչն ուներ և արժանացաւ առաջին կարգի մրցանագրի։ Ընկերութիւնը մի տարում 58,186 օրինակ սուրբ Գիրք է տարածել, ծախսելով 12,329 ռուբլ 56 կոպ. իսկ եկամուտ եղել է 11,230 ռ. 80 կ., այնպէս որ պակասորդը պէտք է լրացուի պահեստի գումարից։

—Գրաժդանին թերթի մէջ իշխան Ն. Իենիկեև դառն կերպով գանգատուում է ռուս զիւղացու կատարած բազմաթիւ տօների դէմ, որոնք սաստիկ վնասում են գիւղատնտեսութեան։ Տօների մասին եղած տրտունջը շատ հին է, սակայն նոր է այն բանը, որով այս չափազանց շատ տօները իշխան Իենիկեևը օրթոդոքս եկեղեցու գիւղացի քահանաների նիւթական վիճակի հետ է կապում։ Այս բոլոր սովորութիւնները, ուխտերը, տօները հոգևորականութիւնն հաստատում է և սրբագործում, որովհետև մեծ շահ ունի նոցանից, որովհետև պաշտամունքներ կատարելու համար քահանաները փող կամ ցորեն են ստանում։ Բարքերն ու սովորոյթները բոլորովին կը փոխուին, հենց որ կղերը հաստատուն և գոհացուցիչ ռոճիկ ստանայ։ Այն ժամանակ միայն հոգևորականները կքարոզեն, որ աշխատելը մեղք չէ, այլ դադարկապորտութիւնն ու ծուլութիւնն են մեղք։

— Նոյն թերթի խմբագիր իշխան Մեշչերսկին խօսելով լեհական խնդրի մասին, ի միջի այլոց յիշում է, թէ ինչպէս երբեմն կաթոլիկները փոխում են իրենց հաւատը և ուղղափառութիւն ընդունում, որպէս զի կարողանան պետական պաշտօններ ստանալ, և այն կաթոլիկը որ երբէք անվստահելի մի անձն էր համարում, այսօր, ուղղափառութիւն ընդունելով, վստահելի է դառնում և տեղ է ստանում։ Այս երևոյթը, որի վերայ շատ ռուսներ անտարբերութեամբ են նայում, յօդուածագիրը օրթոդոքս եկեղեցու համար նախատինք է համարում, որովհետև դորանով ուղղափառդաւանութիւնը դառնում է որևէ պաշտօն ստանալու համար, խղճի վաճառման առարկայ։—Թող քո հայրերի կրօնը, հրաժարուիր քո մկրտութիւնից, հրապարակապէս նզովիր քո եկեղեցին, և յետոյ իրրև ուխտադրուժ, հաւատափոխ և քո եկեղեցուն դաւաճանող, մեր եկեղեցու ծոցը մտիր, և այդ բոլորի համար դու կը ստանաս այն տեղը, որը իրրև կաթոլիկ ստանալու իրաւունք չունէիր. սուխտադրուժ և Ցուդա, քեզ այդ բոլորի համար Ռուսաց պետութեան վստահելի և հաւատարիմ ծառայ կանուանեն։—Արդեօք ճիշտ, հարցնում է Մեշչերսկին, այդպիսի մի տգեղ երևոյթ մեր եկեղեցու փառքի և Ռուսաց պատուի համար խոտելի պիտի համարուի։

Սերբիա. —Բալկանեան թերակղզու վերայ շարունակուում են յուզումներ տեղի ունենալ Սլաւոն ժողովուրդների մէջ՝ փոխադարձ ազգային շահերի պատճառաւ։ Այսպէս, մեծ վէճի առիթ է դարձել Հին Սերբիոյ կենդրոն Իւսկիւբի նոր Մետրոպոլտի հաստատութիւնը։ Սերբիոյ Աղեքսանդրը թագաւորը երկու տարի առաջ Կ. Պոլսում եղած միջոցին խոստումն է առել, որ վերջին մետրոպոլտի մահից յետոյ մի սերբ ընտրուի. բայց երբ նորա մահը տեղի ունեցաւ, Կ. Պոլսի ժողովը

նոր մետրոպոլիտ նշանակեց Ամբրոսիոս յոյն եպիսկոպոսին։ Այդ կարգադրութիւնը մեծ զայրոյթ յառաջ բերաւ Սերբիական ժողովրդի մէջ, որ սպառնում է մինչև իսկ բաժանուել Տիեզ. պատրիարքութիւնից և վերականգնել 100 տարի առաջ դադարած սերբիական հին անկախ պատրիարքութիւնը, եթէ եղած որոշումը ետ չառնուի և սերբ մետրոպոլիտ չնշանակուի Իւսկիւբում։

Ռումինիա։ — Գեննադիոս մետրոպոլտին անիրաւ տեղը իւր աթոռից զրկելու պատճառաւ ծագած վէճը լուծուեցաւ վերջապէս նորանով, որ սինոդը վերցրեց նորա դէմ բարդած մեղադրանքները և վերականգնեց նորա պատիւը. ապա ընդունելով նորա վաղօրօք տուած հրաժարականը, նոր մետրոպոլիտ նշանակեց Յովսէփ Գէորգիանուն, որ արդէն միանգամ այդ բարձր պաշտօնի մէջ եղել է և իւր դէմ լարած մեքենայութիւնների պատճառով ստիպուել է հրաժարական տալ։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

Գերմանիա։—Հայաստանի տառապեալներին նպաստելու գործը կազմակերպուել է Գերմանիայում երկու միմեանցից անկախ յանձնաժողովների միջոցով՝ Բեռլինում և Ֆրանկֆուրտում (Մայնի վերայ)։ Նոյեմբերի 25-ին Ֆրանկֆուրտի յանձնաժողովի նախագահի ձեռներէցութեամբ Բեռլինում մի խորհրդակցութիւն տեղի ունեցաւ, ուր համաձայնութիւն կայացաւ միացնել երկու յանձնաժողովները այս անունով. «Գերմանական օգնող դաշնակցութիւն Հայաստանում տառապանքն ամոքելու» (Deutscher Hilfsbund zur Linderung des Nothstandes in Armenien)։ Այս տարի յունուարի 13-ին և 14-ին Բարմենում Հայոց օգնող գերմանացւոց յանձնաժողովները պէտք է մի ընդհանուր խորհուրդ կազմեն։

— Դոկտոր Լեպսիուսը Շտուտգարտի Liederhalle հանդիսարանում մի դասախօսութիւն կարդաց Հայոց խնդրի մասին։ Ինչպէս լրագիրները հաղորդում են, ընդարձակ դահլիճը վերև ու ներքև հանդիսականներով լեցուն էր։ Միայն այսպէս կոչուած կրթեալներից համարեա թէ չկային։ „Staatsanzeiger“ թերթը շատ աշխատեցաւ ի վնաս այս գործի։ Դիտմամբ ժողովից սակաւ ինչ առաջ այդ լրագիրը մի տեղեկութիւն տուեց Պրեսսէլ քահանայի Կանշտատտում Հայոց խնդրի նկատմամբ արած բանախօսութեան մասին։ փորձելով հալածանքի սարսափները որչափ հնարաւոր է մեղմացնել, և Հայերին իբրև մի այնպիսի ազգ ցոյց տալ, որ իւր գործերին արժանի հաւատացումներ է կրում։ Զուր տեղը ջանաց նոյն թերթը նաև Լեպսիուսի բանախօսութեան թողած տպաւորութիւնը ջնջել։ Ցամենայն դէպս այդ երեկոն մի ապացոյց էր, որ Գերմանիայում, ինչպէս ասում է Allgemeine Evangelisch—Lutherische Zeitung-ը, թրքասէրների անդադար կրկնուող առարկութիւններն և տարածած սառն անտարբերութիւնը այնքան էլ մեծ ոյժ չունին։—Անմիջապէս մի յանձնաժողով կազմուեցաւ դոկտոր Բուրկ հոգևորականի նախագահութեամբ, որ ջանք է գործ դնում այս երկրի բոլոր կողմերում դէպի հայերը ցոյց տուած կարեկցութեանը մի արդիւնաւէտ ուղղութիւն տալու։

Ամերիկա.—Մի նոր հրաշագործ է յայտնուել այստեղ՝ մի հոգևորական, դոկտոր Dowie (Illinois անունով յայտնի), որ պնդում է, թէ ինքն ամեն տեսակ հիւանդութիւններ կարող է աղօթքով բժշկել. ոմանք նորան Աստուծուց առաքուած մարգարէ են համարում, շատերը մի բանդագուշող, շատերն էլ խաբեբայ. բայց բոլորը նորա վերայ նայում են իբրև մի արտակարգ մարդու վերայ։ 1890 թուականից ի վեր նա կենում է Չիկագոյում։ Սկզբում նա շատ սակաւ հետևողներ միայն ունէր, բայց խումբը մեծացաւ։ Պաշտօնեաների արգելքները և լրագրների յարձակումները նպաստեցին միայն նորա գործն ու անունը տարածելու. հասարակութիւնը սկսաւ հետաքրքրուել, բժիշկները դիտում էին նորա բժշկութեան եղանակը, հոգևորականներն այցելում էին նորա հիւանդանոցը և դիտում, եկեղեցական մամուլն սկսաւ զբաղուել նորա զարմանահրաշ բժշկութեան դէպքերով՝ մի խօսքով այսօր Դր. Dowie-ն Ամերիկայում մի մեծ անձն է։ Նա ծնուել է 1847-ին Շոտլանդիոյ Էդինբուրգ քաղաքում. այնտեղ 1872-ին համալսարանն աւարտելուց յետոյ իբրև քարոզիչ Աւստրալիա գնաց, և Սիդնէյ քաղաքում սկսեց իւր աղօթքով հիւանդներ բժշկելու գործունէութիւնը, ուր այն ժամանակ վարակիչ հիւանդութիւն էր ճարակում։—40 հոգի այդ զոհերից թաղելուց յետոյ նա մի անգամ ծանրաթախիծ սրտով իւր զբաղման սենեկում նստած աղօթում էր իւր չարատանջ հօտի վերայ։ Այդ ժամանակ նորա հոգու մէջ կենդանի պատկերացաւ Գործք Առաքելոց ԺԸ. 38 հ. ասուածը։ * Ինչպէս մի յայտնութիւն ընդունեց նա, որ սատանան է հիւանդացնում և մեռցնում, և միայն Յիսուս Քրիստոսից կարելի է փրկութիւն գտնել. եթէ նորան դիմեն աղօթքով, նա հիւանդներին կազատէ սատանայի զօրութիւնից, որովհետև հիւանդութիւնն երբէք Աստուծոյ կամքովչէ լինում։ Ապա անմիջապէս որոշեց իւր կեանքի նպատակ դարձնել

* Դուք ինքներդ գիտէք զբանն, որ եղեւ ընդ ամենայն Հրէաստան սկսեալ ի Գալիլէէ, յետ մկրտութեանն զոր քարոզեաց Յովհաննէս. զՅիսուս որ ի Նազարեթէ, զոր օծն Աստուած Հոգւով սրբով եւ զօրութեամբ, որ շրջեցաւ բարի առնել՝ եւ բժշկել զամենայն ըմբռնեալսն ի սատանայէ, զի Աստուած էր ընդ նմա։ (Ժ. 47—38)։

այս ճշմարտութեան քարոզելը։— Սորա հետևողները, որ մի առանձին կրօնական համայնք են կազմում, կոչուում են «Քրիստոնէական կաթուղիկէ եկեղեցի»։ Dowie նոցա մարգարէն և ուսուցիչն է։ Նա միայն ս. Գիրքն է ընդունում և մերժում է բոլոր դաւանական գրուածքները։ —Ներկայ եղող բժիշկներն հաստատում են, որ նա շատ հիւանդների առողջացրել է՝ մանաւանդ ջղային, հոգեկան կամ այնպիսի հիւանդութիւններ, որոնք ծագում են հաստատուն կամքի պակասութիւնից։

Տեղեկութիւններ Տաճկահայքից։—10 մատղաշ հայ աղջիկ, 8—10 տարեկան, որոնց ծնողները Արարկերի կոտորածին սպանուած էին, անցեալները Կ. Պոլիս բերուեցան, որպէս զի այնտեղի որբանոցում պատսպարուին, բայց սուլթանի անմիջական հրամանով նոքա յանձնուեցան տաճիկ ոստիկանութեան։ Հաւանօրէն այս երեխաներն էլ կանչայտանան։

— Շաքիր փաշան Փոքր Ասիայում շրջան անելուց յետոյ հէնց նոր վերադարձել է իւր ուղևորութիւնից։ Նա տեղէ տեղ ճանապարհորդել է, որպէս զի սուլթանի պատուէրի համաձայն երկրի դրութեան մասին տեղեկանայ։ Այս ուղևորութեան հետևանքն է Բ. Դրան այն որոշումը, որ եւրոպական լրագրներում աւետարանական քարոզիչներին (միսսիոնար) ներկայացնեն իբրև իսկական մեղապարտներ տեղի ունեցած խռովութեանց և կոտորածների համար, և ապա բոլոր քարոզիչներին երկրից արտաքսեն։ Տակաւին մի տարի առաջ իրադէ էր պատրաստուած միսսիոնարներին դուրս հանելու համար, բայց այն ժամանակ ստիպուեցան յետ առնել այդ իրադէն։

—Մի պաշտօնական տեղեկութեան համաձայն 1822 թ. Օսման Ա-ի թագաւորութիւնից ի վեր՝ եթէ չհաշուենք 10000-ից պակաս եղած կոտորածների թիւը, 153,000 քրիստոնիաներ են սպանուել։ 1822-ին 50,000 յոյն, 1850-ին 10,000 նեստորական և հայ, 1876-ին 10,000 բոլղար, 1894-ին 12000 հայ, 1895-ին և 1896-ին 60,000 հայ։ Հաւաստի է, որ նորագոյն կոտորածների ժամանակ 60 000 հայ կողոպտուել են և խողխողուել և 300,000 հոգի իրենց ամբողջ կարողութիւնից զրկուել են։ Սոցանից մօտ 50,000 այրի են, մօտ 20,000 բռնաբարուած աղջիկներ և 120,000 որբ։

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

*
* *

Ցունիմ քեզ համար, ընկեր Թանկագին,
Սրտառուչ, քաղցրիկ վաղեմի ծայներ.
Ա՛խ, բեկբեկ լարերն իմ խեղճ քնարին
Շուտով սրվեցան երգել սեւ օրեր։

Կռիւ է այս կեանքն, եւ այդ կռուի մէջ
Ո՞րքան անպատրաստ, տկար մեր ոյժեր.
Բայց մենք գնում ենք մի յուսով անվերջ
Եւ չունինք ոչինչ մենք այլ քաջալեր։

Նոյն տկարութեամբ մենք ոտք ենք կոխում
Ահա նոր տարին, եւ առաջներիս
Մեր նոյն առաջնորդ աստղիկն ենք տեսնում—
Այդ յոյսն է, աղօտ ղեռ լոյս է տալիս։

Եւ քանի վառ է, չէ հանգել կրակ,
Յառա՛ջ, միշտ յառա՛ջ, ընկե՛ր Թանկագին.
Կեանքն իբրեւ հեղեղ՝ կոհակ առ կոհակ
Շարժուում է, փրկում միայն քաջերին։

*
* *

Կուզէի հնչէր տաւիղս մեղմիկ
Սրտառուչ նուագ, անուշ դայլայլիկ,
Եւ վառէր սրտեր սիրոյ կրակով
Դիմել դէպի գործ միաբան հոգւով։

Կուզէի հնչէր իմ փողն ահարկու,
Թնդացնէր սրտեր իւր ձայնովն հուժկու,
Քնածը զարթնէր, թոյլն արիանար
Կռուելու ցմահ սուրը գործի համար։

Ց. ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.